# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, (096) 33-32-32, goghthamaynq@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N79

### ԱՐՄԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ <<ԳՈՂԹԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Աշխատանքային օրենսգրքի>> 113 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 115 հոդվածի 2-րդ մասի, 129 հոդվածի 1-ին մասի, 170 հոդվածի 2-րդ մասի և Գողթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի N 44 որոշման, *որոշում եմ.*

1. Արմինե Ասատրյանին ազատել <<Գողթի մանկապարտեզ>> նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից: Կատարել հաշվարկ, տրամադրել արձակման նպաստ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, (096) 33-32-32, goghthamaynq@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N80

### ՄԱՌԼԵՆԱ ՆԱԶԱՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, ԵԳՈՐ ՍՏԵՓԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, ՍՎԵՏԼԱՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, ՆԵԼԼԻ ՍՏԵՓԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կ. Մարտիրոսյանի դիմումը և համաձայն <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մ.Ստեփանյանի ընտանիքին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձաց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Մառլենա Նազարի Ստեփանյանի, Եգոր Ստեփանի Ստեփանյանի, Սվետլանա Ստեփանի Ստեփանյանի,Նելլի Ստեփանի Ստեփանյանի համատեղ սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-026-0103-0002 ծածկագրով փաստացի օգտագործվող 0. 0.75256 հա մակերեսով 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ, որը փաստացի նրանց կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ